

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մասնակցություն միջոցառումներին

- ✓ 2017թ. հունվարի 15-18-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Քեյփթաունում (Հարավաֆրիկյան Հանրապետություն) կայացած ՄԱԿ-ի տվյալների համաշխարհային առաջին ֆորումին,
- ✓ 2017թ. հունվարի 25-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Բրյուսելում (Բելգիա) կայացած Եվրոպական հանձնաժողովի Հարևանության և ընդլայման բանակցությունների գլխավոր տնօրինության Թեմատիկ աջակցության, մշտադիտարկման և գնահատման բաժնի կողմից կազմակերպված ECO-NET հանդիպմանը,
- ✓ 2017թ. հունվարի 31-ից փետրվարի 9-ը ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հատազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը մասնակցել է ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Բազմացուցանիշային կլաստերային հետազոտության նկարագիր» թեմայով սեմինարին,
- ✓ 2017թ. փետրվարի 14-15-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի հանդիպմանը,
- ✓ 2017թ. փետրվարի 25-ից մարտի 4-ը ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան, նույն բաժնի առաջատար մասնագետ Մ. Խաչատրյանը և առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը մասնակցել են ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Ազգային հաշիվների վիճակագրություն» թեմայով դասընթացին:

Առաքելություններ

- ✓ 2017թ. հունվարի 9-13-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Համաշխարհային բանկի փորձագետներ Մորից Մեյերը և Գրեգորի Կիսունկոն ՀՀ ԱՎԾ-ի Ազգային ռազմավարության ծրագրի իրականացման ապահովման համար ՀԲ-ի Բազմադոնոր Ծրագրային Տրաստ Հիմնադրամի (ECASTAT) միջոցով ՀՀ ԱՎԾ-ին աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2017թ. հունվարի 17-20-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Դանիայի վիճակագրական ծառայության փորձագետ Յեսպեր Ելեմոսե Յենսենը «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Վիճակագրական տեղեկատվական տարածման համակարգ» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2017թ. հունվարի 30-ից փետրվարի 3-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Իտալիայի վիճակագրական ծառայության (ISTAT) փորձագետներ Ստեֆանո Տերսինյին և Սիմոնա Ռամբերտին «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ջրի հաշիվներ» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2017թ. փետրվարի 6-10-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Լիտվայի վիճակագրական ծառայության փորձագետներ Դալիա Ամբրոզայտիենեն և Յան Գոլուբովիչը «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ժողովրդագրական վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2017թ. փետրվարի 13-15-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Դանիայի վիճակագրական ծառայության փորձագետ Լայֆ Հոֆմանը «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ջրի հաշիվներ» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,

- ✓ 2017թ. փետրվարի 20-24-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրական ծառայության փորձագետներ Հեգե Սյուզան Հաուզլանդը և Մարիա Բոյեն «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աշխատանքի շուկայի վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2017թ. փետրվարի 27-ից մարտի 2-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Ֆինլանդիայի վիճակագրական ծառայության փորձագետ Մերվի Նիեմին և Լիտվայի վիճակագրական ծառայության փորձագետ Գեդեմինաս Սամուոլիսը «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ինովացիայի վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2017թ. փետրվարի 28-ից մարտի 2-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Դանիայի վիճակագրական ծառայության ներկայացուցիչ, ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ղեկավար Շարլոտ Յուլ Հանսենը «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի Կառավարող Կոմիտեի վեցերորդ նիստին մասնակցելու նպատակով:

Տեղային սեմինարներ

- ✓ 2017թ. հունվարի 13-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույունջյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը և «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի ավագ վիճակագիր Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Երևանում կայացած «Միգրացիան Հայաստանում» և Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ILCS) վերաբերյալ հարցերի քննարկմանը,
- ✓ 2017թ. հունվարի 27-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը և մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան մասնակցել են ք. Երևանում կայացած Եվրոպական միության՝ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային զարգացման ցուցանիշների ազգային զեկույցի նախնական ներկայացմանը,
- ✓ 2017թ. հունվարի 30-ին ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը և «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի ավագ վիճակագիր Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Երևանում կայացած Պարենային անվտանգության կլաստերի գործողությունների պլանի վերջնականացմանը և Ամբողջացված համատեքստային վերլուծության արդյունքների ծրագրային կողմերի քննարկմանը ուղղված Պարենային անվտանգության համակարգող խմբի (ՊԱՀԿ) երկրորդ հանդիպմանը,
- ✓ 2017թ. հունվարի 31-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ԵՄ «Կլիմա Արևելք. աջակցություն կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանը Ռուսաստանում և Եվրոպական հարևանության քաղաքանության ծրագրի արևելյան երկրներում» ծրագրի շրջանակներում՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի ընդլայնված նիստի աշխատանքներին,

- ✓ 2017թ. փետրվարի 6-ին ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի երկրորդ կարգի մասնագետ Ք. Հովհաննիսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության զբոսաշրջության ոլորտի զարգացման աշխատաժողով» խորագրով գործնական հանդիպում-սեմինարին,
- ✓ 2017թ. փետրվարի 14-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ուղղված գործողությունների պլան»-ի շրջանակում ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2017թ. փետրվարի 14-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը և նույն բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը մասնակցել են ք. Երևանում կայացած «ՄԱԿ ԿՓՇԿ ներքո Հայաստանի չորրորդ ազգային հաղորդագրության և երկամյա առաջընթացի երկրորդ զեկույցի պատրաստում» ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի շրջանակներում 2013թ. և 2014թ. Զերմոցային գազերի ազգային կադաստրի բարելավման նպատակով կազմակերպված աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2017թ. փետրվարի 16-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի նիստին,
- ✓ 2017թ. փետրվարի 17-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Մինչև երեք տարեկան երեխաների խնամքի կազմակերպման խնդիրներն ու միջազգային փորձը» խորագրով կլոր-սեղան քննարկմանը,
- ✓ 2017թ. փետրվարի 21-23-ը ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շահբազյանը և Մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Ավետիսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Եվրոպական միության անդամ երկրների «Սահմանային և առափնյա պահպանության եվրոպական գործակալության» (FRONTEX) ԵՄ Արևելյան գործընկերության կողմից «Սահմանի համալիր կառավարման կարողությունների զարգացում» նախագծի շրջանակներում կազմակերպվելիք «Մեկ պատուհան» սկզբունքների կիրառման վերաբերյալ ՀՀ պետական ծառայողների համար կազմակերպված դասընթացին,

- ✓ 2017թ. փետրվարի 22-23-ը ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Բանակցություններ. Համաձայնության գալու արվեստ» խորագրով դասընթացին,
- ✓ 2017թ. փետրվարի 27-ին ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը, որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը, գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Գ. Պետրոսյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Վիճակագրական խորհրդատվական կոմիտեի արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրության գծով ենթակոմիտեի նիստին,
- ✓ 2017թ. փետրվարի 27-ին ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սողոմոնյանը և վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Ն. Մարգարյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած 2014թ. մայիսի 29-ի կնքված Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի դրույթներում փոփոխություններ կատարելու առաջարկությունների պատրաստման նպատակով փորձագիտական խմբի նստին: